

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

Հարկան գին 10 րուբլ, կն տարվան 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Քիթիլիսում գրվում են միայն կարգադրության մէջ:

Առարարադրանքներ պետք է ևս ուղարկել
Тифлис, Редакция «Мелік»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Սոյաւարարութիւնը ընդունում է ամեն լիզուով:

Յոյաւարարութիւնները համար, գնարժէք եւ
խաղաղութիւնը բաժին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹԻՒՆ

Հասարակական հանելուկ.— ԵՆՔԻՆ ՏԵՍՈՒ-
թիւն, Նաւակ խմորային, Ներքին լուրեր—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Բարձրական տեսու-
թիւն, Արտաքին լուրեր—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ,
— ՀԵՌԱԳԻՆՆԵՐ, — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ,
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Գաւիթի քէկ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ

Թիֆլիսը դուրեւ բացառութիւն
է ամբողջ աշխարհիս երեսին: Մի
քաղաք, որ ասպրում է ոչ թէ
միայն առանց որ և է իդէալ-
ների, որ չունի իր մտաւոր եւ բա-
րոյական յատկանիշը, իր ուղղու-
թիւնը, իր գոյնը, բայց որ ապ-
րում է առանց որ և է մտաւոր
կեանքի: Մի քաղաք, որ ամ-
բողջապէս ապրում է փոքրիկ եւ
փոքրիկ համար, մարդիկ որոնք
ապրում են առանց մտաւոր կե-
անքի, առանց գլխի:

Թիֆլիսացու համար փորը գըլ-
խաւոր բանն է, փորը կեանքի
նպատակն է, իսկ գլուխը, մտա-
ւոր կեանքը, մտաւոր զարգա-
ցումը, որ և է դադափարներով
հետաքրքրվելը ոչ թէ միայն
երկրորդական բան է, բայց բոլո-
րովն էլ չի կայ նրա համար:

Թիֆլիսցին մի տեսակ հրէշ
է, մի այլանդակ, տձեւ, անհաս-
կանալի երեւոյթ է, մի տեսակ
կինոսո սատիր է, որի համար

ամեն բան հանաք է, ամեն բան
դարդակ, աննպատակ, ճանճրայի,
աւելորդ, յիմար բան է երեսում,
բացի փողից ու փորից: Արա-
համար ոչ թէ միայն ոչինչ սուրբ
բան չի կայ, բայց և ոչինչ բարձր,
յարգելի բան չի կայ նրա աշ-
քում:

Ի՞նչ է հետաքրքրում թիֆ-
լիսցուն. ուսումնարանը, — ոչ, լը-
րագիրը, — ոչ, թատրոնը, — ոչ, ե-
կեղեցական քարոզը, — ոչ, դասա-
խօսութիւնը, — ոչ, ընթերցարա-
նը, — ոչ, ներքին հասարակական
հարցերը, — ոչ, քաղաքականու-
թիւնը, — ոչ....

Ի՞նչ ազդութեան է պատկա-
նում թիֆլիսցին. նա ինքն էլ
չի գիտէ: Այս առաւել, հայ չէ,
միայն չէ, թուրք չէ, եւրոպացի
չէ....

Ի՞նչ լեզուով է խօսում թիֆ-
լիսցին: Այս ինքն էլ չի գիտէ.
նա խօսում է ամբողջ օրը խառն
ամեն տեսակ լեզուներով և ոչ
մինք քիչ թէ շատ օրինաւոր
կերպով չի գիտէ:

Թիֆլիսցին մի հասարակա-
կան հանելուկ է, բայց մի
հանելուկ, որ շատ հեշտ է լուծ-
վում: Դա մտաւորապէս սպառ-
ված, ուղեղով անբարոյականաց-
րած, ապականված մի էակ է:

Ինչ մտաւոր կամ բարոյական

հիմնարկութիւն կամ ձեռնարկու-
թիւն աջողվում է թիֆլիսում,
— ոչ մինք:

Հիմնեցէք մի լրագիր կամ
ամսագիր, լինի նա ուսանելի,
հայերէն կամ վրացերէն լեզուով,
— թիֆլիսում նա չի աջողվի:
Ապա մեկ է թատրոնական խումբ,
— թատրոնի գործը փաստներ կու-
նենայ: Բաց արեք մի գրադա-
րան, ընթերցարան, — այդ հիմ-
նարկութիւնները ձեռք անհնարին
կը լինի պահպանել: Արդարեւ
գասախօսութիւն, — ոչ ոք չի գայ:

Թիֆլիսում բոլոր դպրոցները
փառ են գնում և չեն պահպան-
վում երկար ժամանակ, բացի
կառավարութեան դպրոցներից,
որոնք կառավարութենից նիւ-
թական օժանդակութիւն են սը-
տանում, ընկերութիւնները նոյն-
պէս չեն աջողվում:

Թիֆլիսացու համար փողը ոչ
թէ միջոց է կեանքի մէջ, այլ
նպատակ, որովհետեւ նրա հետ
կապված են նրա համար երկու
բաւականութիւններ՝ փորի կուշտ
լինելը և սեռական յարաբերու-
թիւնները: Այդ երկու բաւակա-
նութենից դուրս թիֆլիսացու
համար ոչինչ չի կայ:

Այս գնում է օպերա, որովհե-
տեւ երգիչ դերասանուհին գեղե-
ցիկ է, նա նայում է երգչուհու

վրա ոչ թէ երաժշտութիւնը,
երգեցողութիւնը վայելելու տե-
սակետից, այլ նայում է նրա վրա
միմիայն ինչպէս կնոջ վրա, մարմ-
նի վրա և յոյս ունի համեմել իր
նպատակին....

Այս հետաքրքրվում է բան-
կերով և փարբիկաներով ոչ թէ
այն պատճառով որ նրա համար
թանկ է նպատակ երկրի առե-
տրական և արդիւնադորձական
կեանքի զարգացմանը, — այլ մի-
միայն իր անձնական շահերի
տեսակետից:

Այս դառնում է Արսիսեան
դպրոցի հոգաբարձու ոչ թէ այն
պատճառով, որ հետաքրքրվում
է ազգային լուսաւորութեան գոր-
ծով, այլ նրա համար որ իր գիր-
քի միջոցով կարողանայ տեղա-
ւորել իր անընդունակ և քաղցած
ազգականներին որպէս վարժա-
պետներ դպրոցի մէջ և ինքն էլ
ազատվի նրանց պահելու հոգ-
սից....

Այս ձգտում է դումայի, ուպ-
րայի անդամ դառնալ, ոչ թէ
թելադրված լինելով հասարա-
կութեան անկեղծ ծառայելու,
նրան օգտաւէտ լինելու զգաց-
մունքից, այլ որովհետեւ այս կամ
այն պաշտօնը ձեռք բերելով կա-
րելի է աւելի հեշտութեամբ պա-
րագել պողրիազներով, աւելի

ԴԵՒԻԹ ԲԵԿ

Գ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Գ

(1722—1728)

Է.

Բլուրը, որի վրա գտնվում էր մատուռը, ծած-
կված էր ուխտաւորների խառն թաղամթիւնով:
Ամբողջ Մրցիկներ այնտեղ էր, ինչպէս ասում
են՝ ասեղ գցելու անց չի կար: Մատուռի կոր-
ծանքով, քայքայված փլուզումների վրա վառ-
վում էին հազարաւոր մանր, որ նուրբում էին
ընթանալով ձեռքերով: Ողբ լսվում էր ծիւղով
խառնի սրբազան անուշաւորութեան:

Բայց ուխտաւորների մեծամասնութեանը այն-
քան չէր հետաքրքրում մատուռի սրբափայլը,
որքան այն մրցութիւնները, որ պիտի կատար-
վէին այսօր: Նրանք իրանց կրօնական պարտը
կատարած էին համարում. մտեր կին փառել,
խառնել էին ծիւղի, ունեւք մատաղներ էին մեղ-
թել, իսկ այժմ կամենում էին դուրսնանալ:

Մեծ պարանի գերդաստանը, իր ուխտը կատա-
րած լինելով, առանձնացել էր մատուռից փոքր
ինչ հեռու, դարձրել ընկուղիների հովանիների
ներքոյ: Այստեղ նորադրա խառնի վրա տարած-
ված էին պարսկական նախշաւ գորգեր և նրանց
վրա շարված էին փափուկ մուխարաներ, պատած
մատաղանայ գոյնզգոյն կերպաներով: Մեծ պա-
րանի տիրուհին, փայլ լոճի մայրը, ծայրագետիկ
նստած էր Արիւն թաւաղի որդու տիկնոջ՝ Մելա-
նիայի հանգիւղ, և նապաստաւ խաղաղապետի ի-
րանց մէջտեղը գրած, նապի էին խաղում: Նա

վրայից հագած ունէր վարդազոյն մախմուրից
քաթիրայ, որի եզերքը զարդարած էին ոսկեթել
ընկերներով, իսկ ասկից հագած ունէր մանիշա-
կազոյն մառախոյց գերիայ: Մէջքի ոսկէ քառա-
րը և գլխի պահածանքները շողողում էին պե-
պէս թանգազին գոհարներով: Ձեռքերի բոլոր
մատների վրա մատանքներ կային: Ինքը տիրու-
հին հասակն առած կին էր, կողոված, պարա-
տացած մարմնով և կարմիր, ուրիշ չի տարայայ-
տող երեսով, որի նաթի, անորոշ գծերը նրան
բաւարոյին գնտակի ձե կին առիւթ:

— Եթէ մի գոյգ չէ չէ ունենում, ես տարած եմ,
ասաց նա ձեռքի դառնալով (թաւի) մատների
մէջ չիտելով: — Ո՛վ սուրբ մատուռ, դու յաջ-
գիր, զարնաւ նա գեղեցիկ նուիրական տեսակները,
պնտութիւն հայցելով:

Նա գցեց դուր մի գոյգ չէ չէ տառաւ:

— Տեսա՞ր, Մելանիայ, ինչպէս շուտ կատար-
վեցաւ իմ ուխտը, բացակայելից նա ծիւղակով,
— ես տարայ, ես տարայ....

— Եւս կատարվեցաւ... կրկնեց Մելանիան
նայնպէս ծիւղակով: — Դու տարայ....

Մի քանի ազնուականների կնիքներ, նայնպէս
խաղաղաւորական հայցաւորներով, բոլորել էին նա-
ցու շուրջը և նայում էին խաղիկ: Նրանք աւե-
լի ուրախացան, որ վերջապէս տիրուհին տարա-
ւի Մելանիայից, որ յայտնի էր իր վարպետութեամբ
խաղի մէջ, — ուրախացան գլխաւորապէս այն
պատճառով, որ երբ նա ամենուր էր առիւթ, այ-
նուհետեւ նրա հետ խառն անկարելի էր լինում:

Մի փոքր հեռու նստած էր Թամարի խորթ
մայրը և խօսում էր մի աղետ պատառի: Եւս, որ
յարգված էր ազնուական կանանց հասարակու-
թեան մէջ ոչ միայն իր ծերութեան պատճառով,
այլ բոլորը համարում էին նրան խիստ բարեպաշտ

և առաքինի կին: Խառնակութեամբ Թամարի մա-
սին էր:

— Ինձ լսիր, դուստր, ասում էր պատառը: —
Ինձեք լուս աղայ է, սիրուն, շնորհով, ջանքի-
կէ թնչ է պակաս: Դիտի մաղբիկ համարեցով
նորանք ունի. նրա ապրանքին թիւ ու համար
չի կայ: Նա տիրում է Թամարին, ինձ ասել է,
որ տիրում է. ինձ մեր անց է ընդունում նա:
Տուր աղջկից, ուղարկ է, ասուր, նրանից լուս փե-
սայ չես գտնի:

— Ո՛վ է պատում նրանից լուս, պատառիս
նեց խորթ մայրը զարդացած ձայնով: — Բայց որ
այդ ստատանայի ծնունդը չէ ուղարկ, ես թնչ պի-
տի անեմ:

— Ստատանայի ծնունդը որն է, չուզեմ որն է,
ինչ ասել է՝ չէ ուղարկ, աղբը անն, ուղեւ տուր,
խառն պատառը նայնպէս զարդացած ձայնով: —
Դու, ինչպէս էլ որ լինի, նրա մեր անցն եւ, նա
ինչ իրաւունք ունի քո կամբին հակառակ կե-
նալու:

— Ասում է կը գնամ ջուրը կրկնեմ, ինձ կը
խեղցնեմ ու Լեանին չեմ ուղի: Միթէ դու նրա
ընտելութիւնը չես խանում, թէ թնչ տեսակ
անզղամե է: — Եւ դրանից չեմոյ թնչ կարող եմ
անել, հարցրեց խորթ մայրը, իրան շուրթած ձե-
ւացնելով:

— Ի՞նչ կարող ես անել... կրկնեց պատառը
զուրկը շարժելով: — Նա քան կարող ես անել,
շատ աղջկիներ սկզբում ասում են՝ ինձ կը խեղ-
ցնեմ, կը գնամ ջուրը կրկնեմ... բայց հէնց որ
փեսայի անից եկած հագուստը հագնում են, ա-
մեն քան մոռանում են....

Թամարը այդ միջոցին հաղանաւորով, որ խա-
տակութիւնը իր մտին է, մի քանի իր հաս-
կից աղջկիների հետ հեռացաւ, ասելով:

— Դեմքը, Սալամ, գեղեցիկ այն կտրու. տես-
նում ես, ինչ լուս րուսեւ են այնտեղ խառնը:
Նա ցոյց տուց ըլլալի տարաւոր, որտեղից սկս-
վում էր մի նաթի, կանաչապարզ տարածութիւն,
որ համարում էր մինչեւ կուրի սիր:

Մանկահասակ խիստանաւոր աղջկիները, պա-
գաժաղ եղջիրուների նման, խառնով սկսեցին
փափկ գեղեցիկ ըլլալի տարաւոր: Նրանք ուրախ
էին, որ վերջապէս ապագիցան իրանց մայրերի,
պատառ աստեղի և մերդրերի ձանձրայի ներ-
կայութեանց և այժմ կարող էին ազատ շուրջ
քաշել:

Թամարը այսօր, ամենախաղաղ փայլաւո-
րեան համեմատ, հագել էր իր ամենախաղաղին
հագուստները: Բազումները զարդարած էին ոսկեայ
ապարանջաններով, իսկ պատառը ոսկով և գոյն-
ըզոյն յաւառներով հիւսված մանեակով: Մէջ-
քին կապած ունէր իր հանգուցեւ մեր ծանրա-
գին քառաբը: Մետաքսեայ, ծիրանեզոյն գե-
րիայի ասկից դուրս էին հայում նրա փաթիկ
ոսկիները, սեղանված կարմիր մաշկների մէջ:
Աղջկիներ խառնը ցրել եկաւ գաշտերի մէջ,
ծաղկներ էին որոնում: Թամարը և Սալամը
չես մնացին Վերջինը Արիւն թաւաղի որդու
աղջկին էր:

— Այն ուն ուրտերներն են այնտեղ արածում,
հարցրեց Սալամը, խառն րաց անելով:

— Ի՞նչ ուրտերներ, պատառիսանց Թամարը,
որպէս թէ այն չէ նկատում:

— Ձեւ տեսնում, ահա այն հեռաւոր ըլլա-
րերի վրա, որ ծածկված են մանր թուփերով: —
Այս կողմը մտիկ տուր, տես, այս կողմը, ասաց
Սալամը մի ձեռքով րոնելով Թամարի թեւից,
իսկ միւս ձեռքը պարզելով գեղեցիկ ուղեւորները:
— Հիմա տեսնում եմ... պատառիսանց Թա-

զիրին է հասնել նիւթական հարստահարութեան...

Եւ չր մոռանանք որ մեր նրկարարութեամբ տեսք ու թէ միայն անուս, կինսո, բարձրա թիֆ-իսցին է, ամբողջ թիֆիսցին, բայց և բարձրագոյն ուսում ստացած, ինտելիգենցիային պատկանող թիֆիսցին:

Թիֆիսցին ոտքից մինչև գլուխ անբարոյականացրած մի էակ է, որի համար ոչինչ մտաւոր, բարոյական և հոգեւոր նպատակ չը կայ կեանքի մէջ: Հարստահարիր, կողոպտիր ու՛մ և ինչքան կարող ես, փորձ կշտացրու և քե՛ք արա, — ահա թիֆիսիսցու գէղեղը:

Թիֆիսցու կեանքը մի անընդհատ անանական օրգիս է, առանց մի ամենաշնչին նշոյն անգամ մտաւոր կեանքի:

Բայց ինչպէս, ինչ պատմական տղեղ և դժբաղդ հանգամանքների շնորհով կազմվել է այդ տեսակ այլանդակ, հրէշաւոր արարած, — ահա մի հասարակական հանելուկ:

Եւ ի՞նչ գերբնական ոյժ, ինչ զօրութիւն հարկաւոր է այդ տեսակ անբարոյականացրած, մարդկային ամեն արժանաւորութիւնը կորցրած հասարակութեան մէջ մտաւոր կեանքի նշոյն անգամ ներշնչելու, ո՞վ կը լինի այն հրաշայի, աստուածալին ոյժը, որ կը սթափնցնի մի ամբողջ ապականված հասարակութիւն իր սարսափելի, մշտական օրդիայից, և կը զգի նրա մէջ մտաւոր առաջադիմութեան առաջին սերմերը, բարոյական, մտաւոր ձգտումների, հասարա-

կական իղէալների առաջին կայծը...

Ոչ ոք, բացի մի անողորմ ոյժից, ժ ա մ ա ն ա կ ի ց, որ հետզհետէ կը հնձի, կը մաքրի մեր ժամանակակից ապականված հասարակութեան երկու երեք սերունդներ, կեանքից գերեզման տեղափոխելով նրանց և ապաքրէղ բանալով նոր, աւելի թարմ, աւելի ազնիւ սերունդի առջև:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԽՐԲԱԳԻՐՆ

Թիֆլիս, 6 փետրվարի

Նուստա սոցիալական Ղուկաս Ղուկասեանց, Համապարտորդելով զեղի Ռուսաստան իմ առեւտրական գործերով, հանգիսեցայ Բոստով (Գոնի գրա) խանութը Ռուսիայի տանը, որ իմ երկրացի է և որտեղ բացի մեզանից կային սոցիալական շնորհ շատեր: Եւ նոյնպէս այլ քաղաքացի հայեր: Ինչո՞ւնքի ժամանակ առաջարկեցինք հաւաքել զրաւ յոգւս թիւրքիայի մեր հայ սոցիալական շնորհներին: Գումարվեցաւ 96 ռուբլ, որ և ուղարկուեալ եմ խմբագրութեանց Նուխաուսի ջոցակի Նեա միասին: Փողը խնցրուեալ եմ հասցնել ըստ պատկանելոյն, իսկ անձանքը տղազբել «Մշակ» լրագրուս:

Ղուկաս Ղուկասեանց 5 ռ., Գոսպար Անպեկեանց 2 ռ., Գալուստ Անպեկեանց 5 ռ., Աւագ Գալուստեանց 5 ռ., Եղբայր Բուժանեանց 15 ռ., Սեփիան Աւետի 5 ռ., Խանութը Ռուսիայի 5 ռ., Գարսիսի Թուժանեանց 3 ռ., Գարսիսի Սեփիան 2 ռ., Մուրադ Լապարեանց 3 ռ., Գոսպար Լապարեանց 3 ռ., Սեփիան Մազաքեանց 1 ռ., Բարայ Միսաքեանց 2 ռ., Կոստայ Կոստեանց 1 ռ., Սեփիանուս Աստրեկեանց 3 ռ., Եղբայր Մազաքեանց 15 ռ., Մանուկ Սարգսեանց 1 ռ., Մանուկ Սարգսեանց 2 ռ., Եղբ. Խոստովեցեանց 3 ռ., Աւաքել Մանուկ 3 ռ., Վարդան Գարսիսեանց 1 ռ., Աւետի Բուժանց 1 ռ., Խոջայ Կարապետով 1 ռ., Սարգսի Տէր Գարսիսեանց 1 ռ., Մեարդ Բարսիսեանց 1 ռ., Գեղորդ Էփրեմ 2 ռ., Գարսիսի Սարգսեանց 1 ռ.,

որտի տիրութիւնը և նոր ջառ պատճառեց նրան: Միւս աշխիւները արդէն գնացել էին քառական նեաւ և վազվզում էին կանոնների մէջ:

Այդ ժամանակ մատուցի մօտ նստաւ մեծ պարտք իր թիֆլիսցիներին և սոցիալականների նեա: Բայց իրաւութիւնը մի կողմ քաղվեցաւ Համապարտ. բայց անկու. համար. նրանք ջան իշան ձիւներէն և խուճով զիմեցին զեղի մատուցի փառաւորները, նախ համարելու և իրանց ուխտը կատարելու համար, որ այնուհետեւ սկսեն հանգելու: Տնտեսութիւնը կառավարող արեգան, երկրեցեական դասի նեա, խաչը ձեռքին, բուժարեւորով, երգելով զիմաւորեցին նրան: Մեծ պարտքը առաջ անցաւ և զիմեց զեղի մատուցի տեղանք, որ միայն ամբողջ էր մնացել ընդհանուր աւերածների մէջ: Նրա նեա երկրեցեց նեաեցին նրան: Սեփիանի վրա դրած էին խաչ, Աւետարան և մի քանի սրբոյ մատուցներ: Նրանց մօտ դրած էր մի թաս գանձանակի համար: Մեծ պարտքը համարեց խաչը, Աւետարանը, սրբոյ մատուցները, զցելով գանձանակի թասի մէջ մի քանի սակի գրամներ: Նրա սկիւտան նեաեց նրա օրհնակին: Երկրեցեցիները զեա երգում էին, ուշադրութեամբ նայելով գանձանակի թասի վրա, որ այժմ քառական նախաձեռնի զրութեան մէջ էր գանձուած: Երկին անգամ համարելով սրբութիւնները, մի քանի անգամ անխորհուրդ կերպով խաչակերելով, նրանք հեապան մատուցից և սկսեցին զիմեց զեղի գարեւոր ընկալեցիները, որոնց նուիրական հոգեմեկներին ներքոյ հանգրստանում էր իշխանական գերդաստանը:

Վրայ՝ մեծ մարդը՝ մեծ պարտքի տիրութիւն զեա ետեւողով շարունակում էր նստու խաչը Մեկտմիայ իշխանուհու նեա: Թամարի խաչով

Մարտիրոս Զուլեմով 1 ռ., Բարայ Գալիսեանց 3 ռ.: Ընդամենը գումարն է 96 ռ.:

Ղուկաս Ղուկասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 8-ին Թիֆլիսի վանքի մայր-եկեղեցւում, ներկայութեամբ սրբազան Գրիգոր եպիսկոպոս Ազարիսեանցի և քաղաքիս ամբողջ հայ հոգեւորականութեան՝ չրեղ կերպով կատարվեցաւ հանգուցեալ Կոստայ Ալեքսանդր Նիկոլաւիւի չի հոգեմեղմանը: Երկեցեցին լի էր հայ հասարակութեան բազմութեամբ: Ազարիսեանց եպիսկոպոսը մի ճառ անց Կոստայի մահուան առիթով և չիւնց այդ ճառի մէջ հանգուցեալ Թագաւորի իր նպատակներին պատ. բոլոր բարեբարութիւնները:

Երէկ, մարտի 10-ին, Թիֆլիսի գոտաւստանական պալատում քննվեցաւ Ալեքսանդր Սէլիֆովի գործը, որ մեղադրուած էր ընդամենով ապստամբանք մատուցելու մէջ: Սէլիֆովի պաշտպան պ. Սենեքերիմ Արմաշին էր: Պաշտպան արդարացրեց Սէլիֆովին և ոչնչացրեց Գանձակի նախնական գոտաւստանի վճիռը, որով նա գոտաւստանում էր 12 տարեայ տաժանակի աշխատանքներին:

Վաղուց արդէն զգացուած էր զերանանական չորհրդէն քառարանի անհրաժեշտութիւնը: Այժմ պ. Պապովի խնցրում է մեղ յայտնել, որ շուտով հրատարակվելու է այդ տեսակ քառարանի վիճակագրական և որ ցանկացողները զրգնել այդ քառարանին, կարող են զիմեց պ. Ե. Կոստուրանցի մազաքիւն Թիֆլիսում, Կոթրցովի փողոցի վրա:

Ենթահայութեամբ ստացանք գնդապետ Լազարովի ուսուցիչ լեզուով տպւած Ռուսական թիւրքերի փորը-Վախյաւում երեւալը և նրանց ձեռքով Ե. Պալի նեաեցիլը: Վերագրով փորով բոշիւրը (Поваление османскихъ тюрковъ Малой Азіи и завоевание ими Константинополя). Այդ յոգւածը նախ տպվեցաւ «Кавказскій Курьер» լրագրի քառարանական բաժնի մէջ: Եզրուածը պարունակում է իր մէջ մի քանի նեաաղբիւր պատմական տեղեկութիւններ:

ԳԻՐԵԼՆԻՑԻՑ տիկին Հովսեփիմ Առուստանատուհանցեց ստացանք 68 ռուբլ նեաեւալ նախնակով: Վախյաւում տեղի 30-ին քաղաքիս թաւարարեաց խումբը մի ներկայացուցիչ տուեց, որից գայացած 68 ռուբլ զուտ արդիւնք:

մայրը զեա տաք-տաք խոսում էր պատանի նեա Որիորդները տակաւին չէին վերագարնել իրանց զուարճալի գրոտներէն:

Մեծ պարտքը մի բարեբանական տղամարդ էր, այն նախա տղամարդերից մէկը, որ տեղեւում է Վոլկանը, նեաեցելով իր լեռների քարեր գաղաթներին: Կախեթու. պինու քարերստ արդեցութիւնից երեւի թրթնած, անհաթ կալին բոլորովին կարմիր գոյն էր տապեց լուրջի նեա խոսնոված: Նոյն գոյնը տարածվում էր նրա աւերածների և խորշաններով պատած, ծալ-ծալ պարանոցի վրա: Աչքերի մէջ արեւն կար. այդ տալիս էր նրան մի տառնակի վայրենի ընտաւութիւն, որը մի և նայն ժամանակ արտայայտում էր կատարեալ անհոգութիւն: Բոլորովին տեղեւած երեւի վրա նստաւ ընկերը ձգվում էին մինչև անհանգիստ: Երեւի վրա առանձին ուշադրութիւն էր դարձած. քաղի շրթանքի մազերից, աւերացած էր նրանց նեա և մեծ քառահալկութեամբ մօտաւ մազերից: Գլխին դրած ուշեր բուխարայի սե մօրթից փարթիկ զգակ, որ թեւեւում էր զեղի աշ անհանգի կողմը: Հազել էր փարցազայն մախաւորից կարված, կարճ քալաշայ, գորգարած ոտկեթիկ եղբրով: Մէջքը գոտեւած էր ուկի քամարով, որից քարը էին ընկած՝ առջինց արեւմտապատ, երկայն խնչալը, իսկ կողքից, նայեղաւ արեւմտով պատած, կեն թուրը: խաչապի մատուցեալ կերպարից կարված լայն շալվարի ստորին մասերը խրած էին մօրեւորդի կաշուց պատարաստ լաւիւքի մէջ, որոնք Թիֆլիսի հեա խորագների ձեապարտն էին: Մեծ պարտքի տիկան թէ հոգուածի ձեաւրով և թէ զենքերով չէին գանազանվում նրանից: սարքերութիւնը միայն հոգուածների նիւթերի և գոյնների մէջն էր, որոնք աչքի էին

շաղկապեց շայտաւանի սովաւանքներին: Այս գումարը ուղարկելով խմբագրութեանց կը խնդրեմ հասցնել ուր հարկն է և «Մշակի» միջոցով ստացան մատին տեղեկացնել հասարակութեանը:

Մեղ հազարգում են ՎԵՐԻՆ-ԱՎԵՐԻԼԻՍԻՑ, որ փետրվարի 28-ին այդանց կատարվեալ մի յանգուցն եղեմնադործութիւն: Առաջակները զիւր ժամանակ մատում են տէր Սիմէոն քանանայ Արքաւանի տան քաղը, զուտ են կանուած տէր Կորը և երբ նա երեւում է զաների մէջ, նրան յանում են և ոչխարի պէս մօրթում են: Ենայ ընտալարանից տանում են նրա բոլոր շարժական կաշիքերը: Թղթակիցը Ազուլիսի տանուակեր ուշադրութիւնը դարձնում է այդ տիւրայի անցքի վրա:

Երեք չորս որ Ռուսաստանի փառք չէր եկել Թիֆլիս, Կովկասեան սարերի վրա եկած անանցների ձիւների պատճառով: Երէկ վերջապէս ստացանք երկու փառք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիական պարլամենտից ընդունված սահմանական թիւլի գործադրութիւնը արդէն անվեցաւ իրանգիայի մէջ: Այդ օրէնքի հիման վրա կայանաւորված են կառուածական միութեան երեք անգամներ և այդ կայանաւորութիւնների լուրը շուտով տարածվեցաւ ամբողջ աշխարհի մէջ: Ուրիշ պետութիւնների մէջ այդպէս չէ լինում: Նրանց մէջ կարող են կայանաւորվել հարիւրաւոր մարդիկ և այդ մասին ոչ մտմալը և ոչ հեռագիրը ոչնչւ տեղեկութիւն չեն հաղորդի և այդպիսի իրողութիւնները աննախելի կը թնան: Շատ երկիրներ խապէս կարող են նախանձով նայել այն քառահալկան զրութեան վրա, որի մէջ այժմ գտնվում է իրանգիան:

Նորերումս հեաաղիւրը հազարեց, որ անգլիական կառավարութիւնը բերններից զինազատար է խնցրել: Այդ առիթով Գլադստօն յայտնեց համայնքների ժողովի մէջ, որ կառավարութիւնը չէ հրամայել անգլիական զորքերի հրամանատար զններով

գործում իրանց վրա խայտարակութեամբ: — Ի՞նչու, այդան ուշադր, հարցնեց մեծ պարտք տիրութիւն, նապու. խաղաղաստեղծ մի կողմ զնկուով, և ուրախ ժողիւր երկին տէր վրա կանցնելով, երբ նրա վեհափառ անսթիլ իր խումբի նեա մօտեցաւ կանանց հասարակութեանը:

— Ի՞նչպէս չուշանայի, պատասխանեց նա քառահալկան խորտուումով: — այդ անպիտան Արթիւր ժամերով պահեց ինձ:

Արթիւր ուրախութեանց սկսեց ծափ տալ: Բայց տիրութեան ստատիկ նեաաղբիւրում էր, թէ անպիտանը: Ինչ առիթով կարող էր ուշացնել իր անուանին: Երբ բոլորը նեաեցին զորքերի վրա, ինքն էլ բանելով իր անուանի ձեռքից և նստացնելով մախաւորի վրա, հարցրեց:

— Ի՞նչ բանի վրա էր վերը:

Գեա մեծ պարտքը չէր պատասխանած, Արթիւր թաւաղի որդին առաջ ընկաւ:

— Ի՞նչ բանի վրա պիտի լինէր, տիրութիւն: — սոց նա, մի առանձին անաղարծաթեամբ կանգնելով կանանց հասարակութեան առջև: — մեծ վիճում էինք այն բանի վրա, թէ ով ում որքան պիտի վճարէ, եթէ նրա խոյր յաղթող կը նա գիտանայ:

— Միթէ պիտի կոտացնէր այսօր, հարցրեց տիրութիւն ծալելով: — այդ լեւ է, մեծք էլ լա թաւալայ կանանց, դարձաւ նա զեղի միւս իշխանութիւններ, որոնք բոլորն էլ պատասխանեցին նրա ուրախութեանը նայեղաւ ուրախ ծալեմերով:

— Պիտի կոտացնենք, պատասխանեց Արթիւր: Թաւաղի որդին նայն անաղարծաթեամբ: — Տեաւում էր իմ խոյր, փրկ է, փրկ, նրա հաւաք անբողջ յրատանում չը կայ:

Բոլոր իշխանութիւնների աչքերը դարձաւ զեղի

վազին գինադար խնդրել բերներից, այլ այդ քանը արել է հրամանատարը իր կողմից, որ կատարելով իր հրամանները և նրա կատարած այդ գործը և բաժանում է հրամանատարի կարծիքները: Այնուհետև կապտան ասաց, որ նա չէ կարող ներկայացնել պարլամենտին խաղաղութեան պայմանները բերների հետ մինչև խաղաղութիւնը չը հաստատուի:

Սը նայելով, որ գերմանական պետական կանցլերը անդադար անբաւականութիւններ է ունենում Պրուսիայի և Գերմանիայի սահմանադրական հիմնադրութիւնների հետ, չը նայելով, որ այդ անբաւականութիւնների պատճառով լուրեր տարածվեցան, իրր թէ կատարութիւնը կամենում է արձակել թայխառաղը, այնու ամենայնիւ պարլամենտի քննութեանը կը ներկայացնեն կատարչական օրինագծեր բանտարկների ապահովութիւնը դժբաղդ պատահարների գէտ պարտաւորեցնելը դարձնելու համար: Միացեալ խորհուրդը մարտի 5-ին քննեց այդ օրինագծերը և վճեց ներկայացնել թայխառաղին:

Լրագիրները հաղորդում են այն հարցի մանրամասնութիւնները, որ ֆրանսիական պատգամաւորների ժողովի անգամ կեանքն ու առաջարկից կատարութիւնը Յունաստանին փառօգ ու զենքեր ծախելու մասին: Ելեմնսո Գամբետայի քաղաքական հասկացողը և համարում, թայց նա չունի երկրորդի ընդունակութիւնները, սրամտութիւնը և տաղանդը: Իր հարցը թացատրելու ժամանակ կեանքն ու անկարող եղաւ հետեւել պարլամենտական օրինագծի ինքն և պատմեց իր մասնաւոր խոսակցութիւնը պատերազմական միջոցների հետ, որից երևում է, թէ միջոցներն յայտնի է եղել, որ զենքը և փառօգը գնվում է Յունաստանի համար Պատերազմական միջոցաւորը ստեղծեցաւ հրապարակորէն հրաժարել իր մասնաւոր խոսակցութիւնից: Ֆրանսիական սենատը նորեւեմ հաստատեց մի քանի հարկերի կատարչական օրինակները:

մատուցել անբաւական, որի շուրջը այդ միջոցին պարտեցնում էին թէ Արշիլ թաւաղի որդու խոյը թէ Լեան թաւաղի որդու չունի և թէ այն բոլոր անասունները, որ այսօր պետք մըցում էին կատարելու, Պաշտոն նախկին սրբազանի շուրջը պետք կատարվել եթէ անգամ, որպէս զի օրդու ներսաները ուժ և զորութիւն ստանային, կըր այդ խորհուրդը վերջացաւ, նրանց տարան առանձին տեղերում պահելու, մինչև հանգիստ սկսվելը: Թայց Արշիլ և Չաքարա թաւաղի որդիների կտրուները, իրանց փանդակներով մնացին գրված մատուցել անբաւականի վրա: Նրանց մաս գրված էին և լորդերի փանդակները, որ պատկանում էին՝ մէկը մեծ պարտիկ ստիքի իրաւունք, իսկ միւսը մեծ պարտիկ մատուցելու:

Հետոյց թաւաղի թաւաղաւ անկուց յետոյ, տիրուին կրկին գործաւ, զէպի մեծ պարտը, հարցնելով:

— Ի՞նչով գրաւ եկաք Արշիլի հետ:

— Եթէ իմ խոյը կը յաղթէ, ես կը ստանամ Արշիլից 500 մուր ճարտեր իրանց հողերով, նրա կալուածներէջ որը որ ընտելու, լինեն: Իսկ եթէ Արշիլի խոյը յաղթվելու լինի, ես կը ստանայ ինձանից 600 մուր ճարտեր իրանց հողերով, իմ կալուածներէջ որը որ ընտելու լինի, պատասխանեց մեծ պարտը, աւելացնելով:— Ինչպէս է, լաւ չեմ բարեկէ:

— Լաւ էր բարեկէ, մէջ մասը Արշիլի տիկինը: Սերանիան, — մեծը հարկը մուրով աւելի կը ստանար:

— Հա, աւելի կը ստանար, կրկին մեծ պարտը նշանակաւ եղանակով, — Ինչ պիտի անէի, ես կը հարկը մուր աւելացրի, քո ջնուց մարդը զարկն տարաւ, Ինչ պիտի անէի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ֆրանսիական (Temps) լրագիրը հաղորդում է հետեւեալը Գամբետայի և Գրեվի տեսակցութեան մասին, որ կայացաւ պատգամաւորների ընտրութիւնը ցուցակներով կատարելու հարցի առթիւ: Տեսակցութիւնը, ինչպէս և միշտ, բարեկամական էր. Գրեվի և Գամբետայի լինելով միմեարմուն, այլ խոսակցում էին: Ինչպէս երևում է հանրապետական նախագահը անպայման ընդգէտ չէ ցուցակներով ընտրութիւնների մէջ: Նրա կարծիքով 1876 և 1877 թուականների պատգամաւորների ժողովի կազմակերպութիւնը առնաւորակ լաւ է, թայց նոր ընտրութեան մէկ կազմակերպիչները այնպէս են գործում, կարծես նրանք կամենում են ազատել այժմեան ժողովից: Այդ պատճառով Գրեվի չէ համակրում ընտրութեան նոր մէջին: Նա նկատեց, որ նմանապէս պատգամաւորների այժմեան մեծամասնութիւնը չափ փութութիւնների առաջն առաւ և նպատակը հանրապետական հաստատութիւնը: Իրեն նախագահ Գրեվի ցանկանում է, որ պահպանվի պատգամաւորների ժողովի այժմեան կազմակերպութիւնը: Հետոյց Գամբետայ նորից կը անեմով Գրեվի հետ:

— (France) լրագիր մէջ տպված է փրագիցի յաղուածը, որ խորհուրդ է տալիս պատգամաւոր Բարգալին յետ անել իր առաջարկութիւնը ընտրութեան նոր մէկ մասին, որպէս զի Գրեվի և Գամբետայ անբաւականութիւն չունենան:

— Լոնդոնից հեռագրում են, որ համայնքների ժողովը վերջացրեց իրանդիայի մէջ զէնք կրելու հարցի քննութիւնը:

— Գարիբոնից հեռագրում են, որ ստիպողական օրէնքների նիստն վրա փետրվարի 25-ին կայանաւորված են դարձեալ 15 մարդ:

— Լոնդոնից հեռագրում են, որ անգլիական կատարութիւնը ի նկատի ունենալով, որ արեւելեան գործերը կարող են խնդրվել, ցանկանում է չուսով վերջացնել իր հայրենիքը բերնների հետ, որոնց առաջարկված են խաղաղական բաւանդացուցիչ պայմաններ: Գաղտնի միջոցաւորութեան հետ մաս յարաբերութիւններ ունեցող (Daily News) լրագիրը հաղորդում է եւրոպական դիպլոմատիային, որ ստիպված է անշարժ մնալ Բ. Դրան մարտը բանակցութիւնների շուրջին:

— Կ. Պոլսից լրագիրներին հաղորդում են, որ մարտի 6-ին նշանակված դեպի անկերի խորհուրդը յայն-թիւրքական վէճի պատճառով չը կայացաւ, որովհետեւ թիւրքաց հաստատմանը Սերափի-փաշա, չէնց որ խորհուրդը պիտի գաւ, սուլթանի պալատը կանգնեցաւ:

Մեկանայի (Հուլի մարդը) դարձեալ սկսեց ծիծաղել և ուրախութիւնից ծափ տալ:

— Իսկ ինձ մեծ պարտը ոչինչ չաւելացրեց, տիրուին, կտրուակելով խոսակցութեան մէջ միտաւ Լեան թաւաղի որդին, մի չարացումը ելի: ստասրց, որը իր մէջը այնքան սեղմել էր որ ծափէ յանարով, որ փոքր էր մնում մէջը կը արթնէ:

— Գաւ ինչ պիտի կուտային, հարցրեց տիրուին, դառնալով զէպի Լեան թաւաղի որդին, — քեզ ինչու պէտք էր աւելացնել, քիչ ունեւ:

— Փառք Աստուծոյ, քիչ չունեմ, թայց դարձեալ ես չէի ցանկանայ յետ մնալ Արշիլից և մի քան աւել չը ստանայ, պատասխանեց երկր տատարը փոքր ինչ վշտացած եղանակով:

— Լաւ, գաւ ինչ պիտի կուտային, կրկինց տիրուին իր հարցը:

— Իմ չունի մեծ չան հետ, եթէ իմը յաղթվէ, կը ստանայ 300 մուր ճարտեր իրանց հողերով, իսկ եթէ մերը յաղթվէ, կը ստանայ նայնքան: Տեսնում էր, երկու կողմերի մրցանակներն եւ հաստար են: Իսկ ինչպիսի է մեծ պարտից որ ցնմը մի 50—100 ուլտար աւելացնէ, թայց նա հակառակի պէս ընդգիծեցաւ: — չէ ու չէ, ասաց, ճարտեր, որքան կամենաս, կաւելացնեմ, թայց ուլտար, մի հատ էլ չեմ կարող աւելացնել:

— Ի հարկէ, ուլտարներ չէր կարելի աւելացնել, պատասխանեց տիրուին: Նուաւ տնտեսագետ եղանակով, — այս տարի առանց գրան էլ մեր խոյն ու պանիրը պակաս է, թայց ճարտեր կարելի էր: ճարտերն ինչ են ապա իսկ մեզ, թող ստանեն նրանք...

Այս միջոցին թաւաղի խորթ մոր հետ խոսող պատաւը նրա ուշադրութիւնը ծածուկ դարձրեց Լեան թաւաղի որդու վրա:

— Լոնդոնից լրագիրներին հաղորդում են, որ մարտի 6-ին կայացած պատգամաւորների միութեան խորհուրդը վճեց թողարկել կատարութեան քաղաքականութեան զէնք հրամանաւոր փրագիցիները:

— Լոնդոնից հեռագրում են, որ համայնքների ժողովը մէջ խաղաղացիների զէնք կրելու հարցը քննելու ժամանակ ժողովի անգամ Գրեվի հեռագրեցաւ ժողովից, որովհետեւ նա անարգեց սոցիալիստներին:

— Կ. Պոլսից լրագիրներին հեռագրում են, թէ թիւրքաց հաստատմանը դեպի անկերի կոնֆերանցային առաջարկեցին հետեւեալ բանը: — Նախան հարցը արդեաւ պետութիւնները թայց թայց յայտնից կարող են այլ ապահովութիւն տալ, որ Բուսաստանը կընդունի Բ. Դրանց առաջարկած և պետութիւնների համաւորութիւնը ստացած սահմանադիր: Այդ հարցի վերաբերեալ զեւ ես ոչինչ չեմ չէ կայացրած:

— (Polit. Corresp.) լրագիրն հաղորդում են Կ. Պոլսից, որ Թիւրքիան և Պարսկաստանը համայնքն են միմեանց հետ սահմանական վէճերի լուծելը և ֆիւրգիտանք խաղաղացիները գործը յանձնել մի խառն մասնաժողովի, որ արդէն կազմված է երեք թիւրք և երկու պարսիկ հաստատմանը: Մասնաժողովին յանձնված է վերջնական սահման որոշել 1,280 կիլոմետր տարածութեան վրա Վանի և Հոտ-Էլ-Արարի մէջ, թայց այդ մասնաժողովը, մի քանի տեղեկութիւններ հաւաքելուց և նախաւոր դեպքում քիւրդերի առաջնորդների հետ բանակցելու յետոյ, պարտաւոր է անհրաժեշտ միջոցներ առաջարկել քիւրդերից կատարվող աւազակութիւնների և ապստամբութիւնների առաջն առնելու համար: Ի նկատի ունենալով քիւրդերի թշնամական դիտաւորութիւնները հաստատմանը նրանք կը ստանան իրանց կառավարութիւնից անշարժ ուղեորով զէպի սահմանները:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒՐԵՐ

Կ. Պոլսի (Հաւ) լրագրից քաղում ենք հետեւեալ զուարթախոսութիւնը: «Խառատուն մարդուն մէկը ասում էր կը լինէր, թայց իմը վեր գրաւ ու առաստաղը վար, այնինքն լինելուն հակառակ ձեռք: Բարեկամները զարնացմանը հարցւցին անոր թէ ինչու արդեաւ այսպէս կը չէր: — Կարգուելու միտք ունեւ բաւ, և հաւանակմանը առաւ կինս երբ տունը փակուէր: Ինչ, այն ասելն տունս կը չափուի:»

Անգլիական լրագիրները հաղորդում են որ

— Տեսնում ես, ինչ չուր ու շնորքով տալ է, գրուաւ թաւաղի խորհն է: — Երկուսն էլ տիրու, երկուսն էլ աղուածակի պէս զեղեցիկ...

— Ինչ անեմ, պատասխանեց խորթ մայրը: — Ինչ քոտանայ թաւաղը, որ մի այդպիսի լաւ ապին թողած, մի անպիտանի ետեկ է ընկած...

— Պէտք է խառնու, պէտք է նրա աչքը հանեա... խորհուրդ էր տալիս պատաւը:

Միւս կողմում խոսակցութիւնը այժմ դարձել էր Չաքարայ ու Արշիլի թաւաղի որդիների առաջարկների վրա և ուրիշ երկու աղուածակների կարծիքների վրա: — Խոսում էին ու ծիծաղում, թէ ով անքանով է գրաւ եկել: Մէկը ասում էր, թէ այն ինչի առաջարկը կը յաղթվէ, միւսը այն ինչի կտրուին էր հաստատում: Վերում էին, թայխանում էին, աղաղակում էին, և միմեանց կուտակալաւ աղաղակներն: Կին կարգում թայց միակ ուղղութիւն արարածները, — որ այդ տար վիճարանութիւնների մէջ մայն չունէին, որոնք հրապի ու չնրի մրցութեան առաջններ էին դարձել: — Էյն և ուր աս էր, որ այժմ հետեւից զուարթութեանը նայում էին իրանց խոսակցների վրա, և անհանգիստութեանը սպասում էին, թէ երբ կը սկսվի հանգիստը, թէ այդ զուարթութեանը հանգիստը վճեցու էր նրանց ամեն մէկի վիճակը և մի բանաւորի ձեռքից միւս բանաւորի ձեռքն էր ցցելու:

— Լաւ, լաւ, բաւական է, ինչու էր վիճում, հանգստացրեց թայքին մեծ պարտի տիրուին, — չուսով կը անենք, թէ որը կը յաղթվէ, շինկուտանց ինչու էր միմեանց թողարկ մասնում...

Այս միջոցում դրան ստիքի իրաւունք հետ, մատուցել կողմից, յայտնվեցաւ մեծ պարտի

Այն կողմ վրա, որտեղ չուսով կողմ օրենադական ժողովի համար ընտրութիւններ տեղի կունենան, առաջին անգամ կը մասնակցեն ընտրութիւններին և կանայր: Ընտրութեան իրաւունքը տրված է թուրք կանանց, որոնք տեղականաւ են և որոնց կալուածքը բերում է տարեկան ոչ պակաս քան 1 ֆուսա սուլթանից արդիներ: Այդպիսով ընտրութեան ցուցակը կաւելանայ 500 անուններով:

Լրագիրները հաղորդում են որ մի անգլիկոսի օրինար լրագիր, որ երկու տարի է արդէն հեռադարձորդում է Եւրոպայում կանանց դրութիւնը ուսումնասիրելու համար, չուսով գալու է Կ. Պոլսից: Գրութիւնը, որպէս զի ուսումնասիրել և ուսու կանանց դրութիւնը: Մի և նայն մասնակց օրինարը Կ. Պոլսից: Գրութիւնը հրապարակական գրառութեանը կը կարգու կանանց դրութեան և իրաւունքի մասին: Կատարութեանը կը լինեն ֆրանսերէն լեզուով:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՈՎԻՉԻ, 9 մարտի 'ի Տէր Հանգուցեալ խորհրդի թաղումը կը լինի մարտի 15-ին: Թաղաւորին ապանող մեծած յարադրը փախստական յանցարար է Տիւայեւ ազգանունով: Սերբուս հուզեարկն, Եւսփայով վիճնուա և Հոսով Սուփորով' ընդին, իշխան Վարանցով Լոնդոն և կը տանեն Կայսրի սեփական ձեռքով գրված նամակները օտար թաղաւորներին: Չարագործները շարունակ կալուածարկում են: Գտնված են շատ դիւմփա և գրամի Մոսկովի վճեց արձան կառուցանել Հանգուցեալ Թաղաւորին Կրեմլի մէջ, պալատի հանգիստը Կրա համար յառկացրած է և հաւաքված է 140,000 ռուբլ:

Ս. ՊԵՏԵՐՈՎԻՉԻ, 9 մարտի Գետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 95 ռ. 47 Կ., երկրորդ 92 ռ., 75 Կ., երրորդ 93 ռ. 50 Կ., չորրորդ 93 ռ., ներքին 5% տոմս փոխառութեան տոմսեր արժէ 221 ռ. 50 Կ., երկրորդ 214 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 91 ռ. 62 Կ., երկրորդ 91 ռ. 62 Կ., երրորդ 91 ռ. 75 Կ., օսկի 7 ռ. 97 Կ.: Թուաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,62 պէնս, ուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 210 մարկ 50 պֆ., Գարիցի վրա 261 ֆրանկ 25 ստեմիւն:

Խորագիր—Կատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԵՆԻ

ձեռնարկական մասանցը: Նա մի երկուստարը կը մտ յան և ինչ տարեկան, այն թեկնամիտ երկուստարներից մէկը, որ անում, բարեկամում են, միշտ տալս մնալով: Մայրը նրան տեսնելով, վեր թաղա իր նստած տեղից, և գրկելով որդուն, հարցնեց:

— Զաւակս, դու ինչ պիտի կուտային:

— Իմ լուրը, դրա լուրի հետ, ես ցայց առեց ստիքի իրաւունք վրա: — Ինչ կը յաղթվէ, անպատաւ կը յաղթվէ, մայրիկ, անս, փանդակը այն տեղ եւ գրի, մատուցի սեղանի վրա: Տեղեկին էլ ասելի, որ մի քան կարգու: Անպատաւ կը յաղթվէ: Մի տեղից ասել է, որ նրան քիւմի կը ուսացնում ես:

— Գաւ ինչով գրաւ եկաք, հարցրեց մայրը, որին մեծ ուրախութիւն էր պատճառում որդու զուարթութիւնը:

Փոխանակ որդուն, պատասխանեց հայրը:

— Եթէ ստիքի իրաւունք լուր յաղթվելու լինի, ես խոստացել եմ նրան թաւաղութիւն տալ, իսկ եթէ իմ որդու լուր յաղթվելու լինի, չեմ խանում, թէ ինչ պիտի ստանայ ստիքի իրաւունքը:

— Ինչ պիտի ստանամ, ասաց մատանգը մի ծաղկով: — Ես ինչ անի որ ես մի քան ստանան: Այս էլ բաւական է, որ իմ լուրը կը յաղթվէ, ես ոչինչ չեմ ուզում:

Մանկահասակ մատանգի մեծանշանութիւնը զարնացրեց թայքին: — Գաւ, գաւ... մայն տեսցին ամեն կողմից և սկսեցին ծափաւորել:

(Կը շարունակուի)